ամին Զէէ յամսեանն Օգոստոսի հինգն ի տօնի Սրբոց Վարդանանց», ասել է, թէ Դաւիթ Գետկեցին ամբողջ հին և նոր կտակարանը գրել է 15 ամսուայ ընթացքում։ Եսայի Նչեցու համար ասուած է. «յայսմ ժամանակի փայլէր ի գահս իմաստասիրութեան իբրև զարեգակն ի կորնթարթն վերին», ոչ պակաս առաքեալներից և մարգարէներից, «ընտրեալ ընտրելոց, ծաղկեալ ծերութեամբ և բարգաւաճ առաքինութեամբ... զգիրս աստուածային ի վերայ բազկաց իւրոց բարձեալ մեկնէր... ծերացեալ և լի իմաստութեամբ, ցուպ ի ձեռին առեալ, զտհաս և զանխմաստ համբակս ժողովէ ի փարախս իմաստութեան ընդ որ և այժմ է տեսանել, զի ի բազում գաւառաց կան դեղերեալ առ պէտս վարժից և տելէտս իմաստից։ Իսկ սա գործէ և կազմէ զխոպանացեալ անդաստանս իւրոց աշակերտեալ մանկանց, ի վեր բողբոջէ արս կատարեալս իւրով որոշմամբ և քաղցրաբոյր վարդապետութեամբ։ Եւ կատարեցաւ առ սա այն բան, թէ որ հանէ զանարգն ի պատուականէն, բերան իմ կոչեսցի. նաև այլևս բազում եցոյց մեզ գութ և խնամ, որ և գիրս աստուածաշունչ բազում օրինակս չնորհեաց. այլև ի խրատատուութեամբ ի բանս և յառոգանութիւնս և ի ստիք (տ՚ՀԱՅ–ոտանաւոր)», այսինքն սովորեցնել արտասանել և ոտանաւոր գրել, որ միջին դարերում շատ ընդունուած ձև էր նոյն իսկ հասարակ, ոչ բանաստեղծական գրուածքների համար։ Աստուածաշնչի օրինակը Եսային է տուել(*)։

Մի ուրիշ Աստուածաշնչի ընդարձակ յիշատակարան գրուած 1330 թուին, բազմակողմանի և հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Գլաձորի գրչութեան դպրոցի մասին. ստացողն է ոմն Ներսէս, «որդի Վահրամա, յաշխարհէն Տարօնու, ի գաւառէն Սանսնու, ի վանացն Ղազարու, ի գեղջէն որ կոչի Կոռ, եղէ ցանկացող ուսման և ընթացայ յարևելս ի գաւառն Վաու (s!) ձոր, ի վանքն Գայլեձոր և եմթն ամ աշխատեցայ ի վարժումն հին և նոր տառից և այլ բազում սրբոց բանից»։ Նա շատ է փափագում մի Աստուածաշունչ գրել տալ, ուստի և իւր բարեկամներից և ազգականներից հաւաքում է հարկաւոր դրամը, մի առ մի յիշելով, թէ ո՛վ ի՞նչքան է տուել, և իւր հայրենակից Յովհաննէս Մշեցու միջնորդութեամբ վարձում է մեզ ծանօթ Եփրեմ և Դաւիթ (Գետկեցին) գրիչներին 1500 դրամով, «բայց յետոյ զրկեց զիս Դաւիթն, աւելացնում է Ներսէսը, քանզի խիստ ագահ էր և արծաթասէր. և գ՚. դր. այլ ել յինէն»։ Պակաս դրամը լրացնելու համար՝ ծախսում է փիլոնը, հողաթափները որպէս ճանապարհածախս եւ գնում Թադէոս առաքեալի վանքը Զաքարիա Ծործորեցու մօտ և նորանից 500 դրամ ստանում, և Գայլեձոր վերադառնալով, վճարում պարտքը։ Ձեռագիրը գրուած է տասն ամսուայ ընթացքում. «Ձսա սկսեալ ի Դեկտեմբերի, աւարտեցաւ ի Հոկտեմբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարաց։ Նկարողն է Թորոս Տարօ-

Պատկեր 218.

(*) Փիրղալէմեան. Նշխարք Պատմութեան Հայոց թ. 83. տ. ցաւել. բ. 24։ Տարաբաղդաբար տեղեկութիւն չունինք ձեռագրի մանրանկարչութեան մասին, ուստի և չենք կարող ասել, թէ ի՞նչ չափով ճոխ էր նկարներով և ո՞ր դէպքերը նորա նիւթը։ Ձեռագիրը գտնւում է Բաղէշի Ամրոցում Ս. Կարապետի վանքում։